«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողի մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը « Ես և շրջակա աշխարհը » առարկայի դասավանդման ընթացքում
ԱՌԱՐԿԱ	Ես և շրջակա աշխարհը
ՀԵՂԻՆԱԿ	Սոնյա Ղուկասյան
ՄԱՐԶ	Շիրակի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն ……..…..….. 3
2. ‹‹Ես և շրջակա աշխարհը›› առարկայի ուսուցման նպատակը և նշանակությունը տարրական դպրոցում …….….. 6
3. Բնագիտական և հասարակագիտական առարկաների ներառումը ‹‹Ես և շրջակա աշխարհը›› առարկայի ծրագրի մեջ ……... 8
4. ‹‹Ես և շրջակա աշխարհը›› առարկայի հատկությունները …….…. 9
5. Հետազոտական աշխատանքի կիրառման առանձնահատկությունները տարրական դասարանում ……. 12
6. Կրտսեր դպրոցականի հետազոտական գործունեության կազմապերպումը, նրանց ինքնուրույնության, անհատականության և ստեղծագործական ունակությունների զարգացման ուղղի …… 15
7. Եզրակացություն ……... 21

Ներածություն

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի բարեփոխումների հիմքում ընկած սկզբունքները, ինչպես նաև այլ երկրների փորձը՝ 2006 թվականից տասներկուամյա կրթական ծրագրի շրջանակներում հանրակրթական դպրոցի ուսումնական պլանում ավանդական առարկաների չափորոշիչների, ծրագրերի և դասագրքերի բովանդակության վերանայման հետ ներդրվեցին մի շարք միասնացված /ինտեգրված/ առարկաներ, այդ թվում նաև բնագիտական և հասարակագիտական ոլորտների առարկաներ:

Բնագիտական և հասարակագիտական ինտեգրված առարկաների հիմնական նպատակն է սովորողներին տալ նախնական պատկերացումներ բնության և հասարակական կյանքի մասին, չբաժանելով համապատասխան գիտելիքներն առանձին, նեղ առարկայական ոլորտների, սովորողների մեջ ձևավորել բնության և հասարակական երևույթները բացահայտելու պարզագույն կարողություններ, նպաստել նրանց տրամաբանական մտածողության զարգացմանը, ապահովել բնագիտական և հասարակագիտական առարկաների հետագա ուսուցման համար անհրաժեշտ հիմքերը: [2]

1.**Թեմայի արդիականությունը**:Անձի ինքնուրույն և ստեղծագործ լինելու սոցիալական պահանջը, ինչպես նաև ժամանակակից դպրոցի կողմից մշակված մանկավարժական տեխնոլոգիաները կնպաստեն կրտսեր դպրուցականների հետազոտական կարողությունների զարգացմանը և կհարստացնեն կրտսեր դպրոցում առկա հետազոտական գործունեության փորձը:

2.**Հետազոտության նպատակը՝**

1. Հետազոտել, վերլուծել մարդու և բնության փոխկապակցվածությունը
2. Առաջացնել հետաքրքրություն բնության, բնական երևույթների, կենդանական և բուսական աշխարհի, բնության մեջ կատարվող փոփոխությունների նկատմամբ
3. Զարգացնել բնության մեջ ուսումնասիրություններ և բացահայտումներ կատարելու կարողություններ

4. Պատկերացում տալ կենդանի և անկենդան մարմինների , դրանց առանձնահատկությունների , փոխազդեցությունների, ինչպես նաև մարդու օրգանիզմի մասին

5. Տալ նախնական գիտելիքներ շրջակա միջավայրի պահմանման և մաքրության, բնական ռեսուրսների ճիշտ օգտագործման մասին

6. Հետազոտական և հաղորդակցական կարողությունների և համագործակցային հմտությունների զարգացում

7. Տեղեկատվության վրա աշխատելու կարողությունների զարգացում

3.**Հետազոտության խնդիրները .**

1. Համեմատել կամ հակադրել դասանյութում եղած երկու կամ ավելի մտքեր կամ հասկացություններ

2. Ունենալ դիրքորոշում և կարողանալ հակառակ փաստարկներից պաշտպանել այն

3. Որոշել, թե որն է գործողությունների ամենաարդյունավետ ընթացքը՝դասից բխող խնդիրները լուծելու համար

4. Ստեղծագործական գործունեության արդյունքների գնահատում

5. Տվյալներ հավաքագրելու, համակարգելուկարողությունների ձևավորում:Տեղեկատվական տարբեր աղբյուրներից օգտվելու կարողություն:

6. Կիրառել ստացած գիտելիքները կյանքում , կենցաղում ուսումնասիրություններ և փորձեր կատարելիս: [1]

4.**Օգտագործվող մեթոդները** : Ուսուցման գործընթացում իհարկե կարելի է կիրառել բազմազան մեթոդներ, ուսումնական գործունեության տարբեր տեսակներ, սակայն առարկայի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ վստահաբար կարելի է ասել, որ լավագույնը դաս-էքսկուրսիաների, գործնական և փորձնական աշխատանքների, բնության դիտումների կազմակերպումն է: Անվանումն արդեն հուշում է, որ այս առարկան աշխարհը և ինքն իրեն ճանաչելու առարկա է: Իսկ ինչպե՞ս կարելի է ճանաչել աշխարհը՝ փակվելով դպրոցի կամ

դասարանի պատերի ներսում: Ընդ որում, կարևոր է նկատի ունենալ, որ դասարանից պետք է դուրս գալ ոչ միայն արևոտ, պայծառ եղանակներին: Ճիշտ կլինի, որ երեխաները բնության երևույթները համեմատելու հնարավորություն ունենան: Իհարկե մինչև դպրոց հաճախելը երեխաները անձրև կամ ձյուն, սառույց կամ ջուր տեսել են, սակայն հարցն այն է, որ այդ նույն երևույթները երեխաները տեսել ու զգացել են՝ հնարավորություն չունենալով նպատակաուղղված ուսումնասիրելու, զրուցելու դրանց մասին, ճանաչելու, համեմատելու, հատկությունները որոշելու, առաջացման պատճառները գտնելու, հետևանքները քննարկելու, կապեր գտնելու տարբեր երևույթների միջև և այլն: Կարևոր է, որ էքսկուրսիաները հենց այդ նպատակով կազմակերպվեն և ոչ թե զվարճանալու, հանգստանալու, պարզապես ժամանակ անցկացնելու համար: Ուսուցիչը պարբերաբար, նպատակային ձևով, պլանավորված և հետևողականորեն կազմակերպելով սովորողների դիտումները և աշակերտին աստիճանաբար սովորեցնելով վերլուծել և ընդհանրացնել ստացված նյութը՝ կարող է նրա մեջ իբրև անձնային որակ ձևավորել դիտողունակությունը:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան մեծ հնարավորություններ է ընձեռում երեխաների մեջ աշխատանքային պարզ գործողություններ կատարելու կարողություններ ձևավորելու համար: Առաջին աշխատանքնային հմտությունները շատ կարևոր նշանակություն ունեն ավելի բարդ աշխատանքային հմտությունների ձևավորման առումով:

Դասընթացի այն թեմաները, որոնք կապված են ինքնաճանաչման, ընկերներին, ընտանիքի անդամներին, ազգականներին, առհասարակ, մարդկանց ճանաչելու հետ, կարելի է ուսումնասիրել դասարանում՝ կիրառելով զրույցի, հարցուպատասխանի մեթոդները, կազմակերպել հարցաթերթիկների, լուսանկարների, հավաքածուների, սիրելի առարկաների ուսումնասիրություն, շատ նկարել և այլն: Կարելի է հաճախակի հրավիրել ծնողների, , ովքեր կարող են մասնակցել ինչպես աշխատանքների պլանավորման, նախապատրաստական աշխատանքներին, այնպես էլ բուն ուսումնական գործընթացին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1

1.1 « Ես և շրջակա աշխարհը » ինտեգրված առարկայի ուսուցման նշանակությունը տարրական դպրոցում

ՈՒսումնական գործընթացում չպետք է կարևորվի պարզապես հիշողության վրա հիմնված առանձին փաստերի, տերմինների մանրամասն իմացությունը: Առարկաների ինտեգրված բնույթը պայմանավորված է տվյալ տարիքի երեխաների աշխարհընկալման առանձնահատկություններով:

Երեխան իր ճանաչողության գործընթացում հետզհետե բացահայտում է իրեն շրջապատող աշխարհը և նրա առջև բացվում են նոր մտահորիզոններ: Դեռևս մանուկ հասակից գույների և հնչյունների բազմազանության մեջ երեխան բացահայտելով հետազոտում է շրջապատող աշխարհը:

Ժամանակակից կյանքի կացութաձևը, հասարակական հարաբերությունները և շրջապատող բնությունը երեխայի գեղագիտական զարգացման նախադրյալներն են:

Բնագիտություն առարկան իր կրթական խնդիրներով, գործառույթներով, բովանդակության ընտրության սկզբունքներով էապես տարբերվում է հանրակրթական դպրոցում ուսումնասիրվող այլ բնագիտական առարկաներից: Առարկայի կարևորագույն հատկությունն ինտեգրված բնույթն է: Առարկան նպատակ ունի միջին դպրոցի սկզբնական փուլում լուծելու սովորողների բնագիտական կրթության խնդիրները՝ հիմքեր ստեղծելով դրանից հետո առանձին բնագիտական առարկաների՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության ուսումնասիրության համար: [5]

«Բնագիտությունը» ինտեգրված առարկա է, որը չի ներառում նեղ, առարկայական գիտելիքներ: Այս առարկան պետք է դիտարկել որպես բնագիտական առարկաների մեխանիկական միասնություն:

ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում, միջնակարգ կրթության պետական չափորոշիչով նախատեսվում է ,Բնական գիտությունները և ,Հասարակական գիտությունները բնագավառները տարրական դպրոցում ներկայացնել ինտեգրված ,Ես և շրջակա աշխարհը» առարկայով:

Ըստ չափորոշչի՝ տարրական դպրոցն ավարտողը պետք է տարրական պատկերացում ունենա կենդանի և անկենդան մարմինների առանձնահատկությունների, դրանց փոխազդեցությունների, ինչպես նաև մարդու օրգանիզմի մասին: Իմանա մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության, իր կյանքում բնության դերի մասին: Պետք է նախնական գիտելիքներ ունենա մարդու, հասարակության և բնական միջավայրի, բնական և հասարակական երևույթների մասին և այլն: [2]

1.2 Բնագիտական և հասարակագիտական ոլորտների ներառումը ,Ես և շրջակա աշխարհի» առարկայի ծրագրի մեջ

Չի կարելի ասել, որ այս նպատակներն ու խնդիրներն ամբողջությամբ անտեսված են եղել նախկինում: Դրանց մեծ մասը՝ հատկապես հասարակագիտական բնագավառի խնդիրները տարրալուծված են եղել ,Մայրենի լեզու» առարկայում, իրենց մեջ ներառելով նաև մի շարք դաստիարակչական խնդիրներ: Երկու բնագավառն էլ տարրական դպրոցում անտեսված չեն եղել, սակայն երկուսն էլ կարիք են ունեցել համակարգված դասավանդման, ինչպես նաև հմտությունների և գործնական կիրառությունների ուսուցանման, ներառման:

Ինչու՞ է ավելի նպատակահարմար այս երկու բնագավառը տարրական դպրոցում ինտեգրված տարբերակով ներկայացնելը: Իրականում մարդու աշխարհաճանաչողությունը ի ծնե ինտեգրված է, նա աշխարհին ընկալում է առանց դրանք իրարից զատելու՝ որն է բնագիտականը, որը՝ հասարակագիտականը: Այդ տարանջատումը խիստ պայմանական է և անբնական՝ գոնե տարրական դպրոցի համար: Հետագայում, երբ այդ բնագավառներն ավելի են ընդարձակվում և մի քանի ուղղություններով խորանում, առավել ընդգրկուն ներկայացնելու համար, նոր միայն նպատակահարմար է դառնում առարկաները դիֆերենցելը: [2]



1.3 «Ես և շրջակա աշխարհի» առարկայի կարևոր հատկությունները

Բնագիտության ուսումնասիրության առարկան ամբողջ բնությունն է՝ իր կառուցվածքային խոշոր միավորներով: Քանի որ առարկան նպատակ ունի նախնական պատկերացումներ ձևավորել բնության օբյեկտների և երևույթների մասին, ուստի ուսումնական գործընթացում չպետք է կարևորվի պարզապես հիշողության վրա հիմնված առանձին փաստերի, տերմինների մանրամասն իմացությունը: Առարկայի միասնացված բնույթը պայմանավորված է տվյալ տարիքի երեխաների աշխարհընկալման առանձնահատկություններով: 2-4-րդ դասարանցին բնությունը, երևույթներն ընկալում է ամբողջական, ընդհանրական գծերով՝ առանց խորանալու մանրամասնությունների մեջ: Նա պատրաստ չէ աշխարհն ընկալել առանձին գիտությունների լույսի տակ: Նրա համար դեռևս ընկալելի չեն այն արհեստական սահմանները, որոնցով իրարից առանձնացված են տարբեր գիտությունները: Առարկայի հաջորդ կարևոր առանձնահատկությունն իր գործնական ուղղվածությունն է: Տվյալ տարիքի երեխաների հետաքրքրասիրությունը նրանց մղում է բնության հետ ակտիվ փոխազդեցության, հետազոտական գործունեության: ՈՒստի ուսուցիչը պետք է նպաստավոր պայմաններ ստեղծի. հնարավորինս մեծ ուշադրություն դարձնի գործնական աշխատանքներին, հաճախակի կազմակերպի էքսկուրսիաներ: Բնության հետ կենդանի շփումը, ուղղակի զգայական կապը լավագույնս կարող են նպաստել երեխաների մտածողության զարգացմանը: Բնագիտության առարկայի ծրագրով նախատեսվում են տեսական նյութի ներկայացում, ցուցադրումներ, գործնական աշխատանքներ: Կարևորվում է նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների /ՏՀՏ/ օգտագործումը որպես ուսուցման կազմակերպման արդյունավետ միջոց: Առարկայի ուսումնասիրման հիմնական խնդիրն է սովորողների մեջ ձևավորել բնության միասնականության մասին պատկերացում, մատնանշել տարբեր երևույթների կապը: [2]

Վերջին տասնամյակներում ձևավորվել և բուռն զարգացում է ապրել գիտությունների մի ամբողջ համակարգ՝ Երկիր մոլորակի բնապահպանության, բնօգտագործման վերաբերյալ «Մարդկության ինքնաոչնչացման վտանգ» , «Բնապահպանական և բնօգտագործման հիմնադիր» հասկացությունները դարձել են համայն մարդկությանը հուզող հարցեր: Մարդը գոյատևում և ապահովում է իր հասարակական առաջընթացը՝ օգտվելով բնության

բարիքներից: Մարդու վերաբերմունքը բնական միջավայրի նկատմամբ ի սկզբանե եղել է սպառողական, բայց այդ միջավայրի ինքնազարգացման և ինքնավերականգման միջոցով «բուժվել են» մարդահարույց վնասները: Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասազերծումը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը: Շրջակա միջավայրի քաղաքականությունը մշակում է բնապահպանության նախարարությունը: [6]

Մարդն իր ծագման առաջին իսկ օրերից բազմաթիվ թելերով կապված է շրջակա միջավայրի և բնության հետ: Երեխաները պետք է իմանան շատ կարևոր մի քանի հարցերի պատասխաներ՝ «Ինչպիսի՞ն են մարդու և բնության փոխհարաբերությունները», «Ի՞նչ տեղ ունի մարդը բնության մեջ» և «Ինչպե՞ս է բնությունը ծառայեցնում իրեն»;

Հասարակագիտական ոլորտ

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնել երեխաներին՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատի, այլև որպես հասարակության մասնիկի: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է "կառուցել" իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի: Կրտսեր դպրոցականի պատկերացումներն ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ: Այս առումով կարևորում ենք նպատակային էքսկուրսիաների և զբոսանքների դերը, որոնք ոչ միայն նպաստում են աշակերտների մտավոր զարգացմանը, այլև հարստացնում են նրանց ճանաչողական գործունեության սեփական փորձը:

Երեխան պետք է կարողանա

- Որպես առավելություն ընկալել իր և ընկերների տարբերություններն ու առանձնահատկությունները, նկարագրել և պատճառաբանել տարբեր իրավիճակներում ունեցած իր հույզերը:
- Հասկանալ ընտանիքում իրավունքների և պարտականությունների փոխկապակցվածությունը, հիմնավորելհամակեցության կանոնների անհրաժեշտությունը ընտանիքում:
- Խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից, պատասծանատու վարքագիծ դրսևորի շրջապատի հանդեպ
- Գիտակցել սեփական վարքագծի հնարավոր հետևանքները
- Իր բնակավայրում կողմնորոշվելու նպատակով հարցումներ անել և ուղղորդվել դրանցով
- Կարևորել ընկերական հարաբերությունների դերն իր կյանքում

Հասարակագիտական ոլորտից «ԵՍ և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակորթյան մեջ ներառված են՝ իրավունք և պարտականություն, իրավունքների շուրջ ծագած հակասություններ թեմաները, ինչպես նաև՝

*հանդուրժողականություն

*իրավահավասարություն

*կարծրատիպեր

*միջմշակութային հաղորդակցություն

*փոփոխությունները մարդու կյանքում

*անհատի դերը ապագայի ընտրության հարցում:

Նախնական գիտելիքներ կտրվեն հասարակական հարաբերությունների, տարիքային, սեռային, մարդկանց մշակութային և այլ տարբերությունների մաս; [2]

ԳԼՈՒԽ 2

2.1 Հետազոտական մեթոդի կիրառման առանձնահատկությունները

Տարրական դասարաններում

ՈՒսումնական հետազոտական աշխատանքը ուսուցչի կողմից հատուկ կազմակերպված և աշակերտների կողմից ինքնուրույն իրականացվող գործողությունների ամբողջությունն է, որն ավարտվում է ստեղծագործական վերջնարդյունքով: Այն իրենից ներկայացնում է հետազոտական, որոնողական, պրոբլեմային մեթոդների համատեղում: Հետազոտությունը կարող է արդյունավետ գործիք լինել երեխայի իմացականության և ստեղծագործականության զարգացման համար: Հետազոտություն կարող է իրականացվել առարկայական, միջառարկայական և վերառարկայական ընդգրկումով: ՈՒսուցման հետազոտական համակարգի հիմնական արժեքն այն է, որ այն աշակերտներին ուղղորդում է, ոչ թե որոշակի թեմայի պարզ ուսումնասիրության, այլ կրթական արդյունք ստեղծելու գործընթացին:

Աշակերտներն անհատապես կամ խմբովի, հանձնարարված թեմայի առնչությամբ, որոշակի ժամանակահատվածում, իրականացնում են ճանաչողական, հետազոտական, կառուցողական կամ այլ բնույթի աշխատանքներ: Որպես նախագծի կազմակերպիչ, համակարգող և խորհրդատու ուսուցիչն աշակերտների մեջ ձևավորում է մի շարք հետազոտական կարողություններ՝ որոշել և բացահայտել որոշակի հիմնախնդիր, ճշգրտել ոչ պարզ հարցերը, ձևակերպել և ստուգել վարկածները (ենթադրությունները), պլանավորել և մշակել նախագծային և կառուցողական գործեղություններ, տվյալներ (փաստեր) հավաքել, դիտակել, զննումներ կատարել, ապացուցել, վերլուծել, կապակցել և հակադրել դրանք հանդես գալ նախապատրաստական հաղորդումներով, եզրահանգումներով և այլն: [3]

Անդրադառնանք նախագծի շուրջ կատարվող աշխատանքների առավել բարդ փուլերին:

Առաջին հարցը, որ ուսուցիչը պետք է պարզի ինքն իր համար, այն է, թե որն է ուսուցման մեջ ներդրված նախագծային գոծունեության նպատակը: Խիստ կարևոր է նախագծի յուրաքանչյուր փուլում աշակերտների համար բացահայտել հնարավոր բոլոր լուծումները: Դրա համար

ուսուցիչը պետք է վերահսկի և ուղղորդի խմբի կամ առանձին մասնակիցների աշխատանքը։ Հետազոտական աշխատանքը չի իրականանա, եթե ուսուցիչը չօգնի աշակերտներին՝ տեսնելու պրոբլեմը, չսատարի նրանց լուծումները, չհուշի պրոբլեմի լուծման հնարավոր ուղիներ;

Մենք համոզված ենք, որ թույլատրելի չէ հետազոտական աշխատանքի կատարումը տանը։

Հաճախ ենք հանդիպում նման իրավիճակների, երբ ծնողը մոլորված հարցնում է, թե չգիտի՝ ինչպես օգնի երեղային, ինչ պետք է անի նա։

Երբ հետազոտությունը վերածվում է տնային հանձնարարության, հենց սկզբից երեխաները հայտնվում են անհավասար պայմաններում։ ՈՒսուցիչը չի կարող շտկում կատարել աշակերտների աշխատանքում, առավել ևս չենք խոսում նրանց աշխատանքի միջանկյալ գնահատումների մասին։ Բանիմացության ձևավորումն ընթանում է տարերայնորեն, և հաճախ այդ աշխատանքը դառնում է գիտելիքների պարզ կուտակում, ինչից խուսափելու ակնկալիքով ստեղծված հետազոտության մեթոդը։

Հետազոտական գործունեությունը ենթադրում է՝ ուսուցիչի կողմից կազմակերպված աշակերտների համար կարևորություն ներկայացնող պրոբլեմի լուծման նպատակով նրանց ինքնուրույն աշխատանքը։ Այնքան էլ հեշտ չէ աշակերտի համար այդ կարևոր պրոբլեմի որոշումը։

Գոյություն ունեն հետազոտական գործունեության տարբեր տեսակներ։ Պրակտիկայում առավել հաճախ օգտագործվում են անհատական և խմբային գործունեության հետազոտության հետևյալ տեսակները.

- **Հետազոտական-ստեղծագործական** (երխաները փորձարկում, ձևավորում են արդյունքը, հաղորդումների, զեկուցումների, թերթի, բեմկանացման կամ դիզայնիտեսքով)։
- **Դերային-խաղային** (ստեղծգործական խաղերի տարրերով, թատերականացման և այլն միջոցներ)
- **Տեղեկատվական-կողմնորոշիչ** (երեխաները հավաքում և իրացնում են տեղեկատվությունը)

Գործնական-ստեղգործական-կողմնորոշիչ (սա ներառում է դասը կամ դրա մի մասը, արտադասարանային միջոցառում, առարկայական շաբաթ և այլն)

Աշակերտների հետազոտական գործունեությունը կարող է իրականացվել անհատապես, զույգերով կամ խմբում որոշակի ժամանակային հատվածում (դասի մի հատվածում, մեկ դասժամում, մի քանի ժամերի ընթացքում, ընդ որում՝ ոչ իրար անմիջապես հաջորդող)։

Նշենք նաև, որ նախագծային առաջադրանքների պարբերաբար օգտագործումը նպաստում է աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը, ընդ որում՝ այդ առաջադրանքները կարող են կատարվել աշակերտական տարբեր խմբերում՝ մտավոր գործունեության մակարդակի աճման սկզբունքով; [3]

2.2 Կրտսեր դպրոցականների հետազոտական գործունեությանկազմակերպումըէնրանց ինքնուրույնության և անհատականության զարգացման ուղղի

Գաղտնիք չէ, որ երեխաների հետաքրքրությունների աշխարհը լի է հազար ու մի «ինչուներով», և նրանք օր առաջ ձգտում են ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները։ Այդ դեպքում եթե մեծերի կողմից դրսևորվում է խթանում ու աջակցություն, նրանք ոգևորությամբ ձեռնամուխ են լինում իրենց հարցերի պատասխանները հնարավորինս շուտ ստանալու գործնթացին։

Հետազոտությունների նկատմամբ հակում ունեն բացառապես բոլոր երեխաները։ Նոր տպավորությունների անհագ ծարավը, հետաքրքրասիրությունը, փորձ անելու և ճշմարտությունը ինքնուրույն բացահայտելու մշտական ձգտումը հատուկ է վառ երևակայությամբ օժտված և էներգիայով լեցուն երեխաներին։ Ուստի ուսուցչից պահանջվում է այդ էներգիան ուղղորդել երեխաների այդ մեծ նպատակի իրականացմանը։

Հետազոտական ունակությունների ձևավորման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

Համակարգվածություն: Հետազոտական ունակությունների զարգացման ուղղությամբ աշխատանքները պետք է ատրվեն անընդհատ՝ և՛դասապրոցեսում, և՛ արտադասարանական գործունեության ընթացքում։

Դրտապատճառ / մոտիվացիա /: Ուսուցիչն օգնում է աշակերտին ինքնազարգացման ճանապարհին հետազոտական գործունեության մեջ տեսնելու իր ունակությունների դրսևորման հնարավորությունը։

Հոգեբանական գործոն:Ուսուցրի խնդիրն է՝ աջակցել աշակերտերի ստեղծագործական գաղափարների զարգացմանը։ 5

Տարիքային առանձնահատկություն:Հետազոտական աշխատանքը պետք է սկսել առաջին դասարանից։ դրանք կարելի է զարգացնել խաղերի, տարաբնույթ աշխատանքների միջոցով, որոնք կակտիվացնեն երեխաների ստեղծագործական գործունեությունը։Դասարանի հետ անցկացրած մարզողական աշխատանքները հնարավորություն կտան ծանոթանալու յուրաքանչյուր երեխայի հետազոտական հնարավորությունների ալգորիթմին։ Միաժամանակ

պետք է երեխայի սովորեցնել , թե որտեղից կարելի է ստանալ տեղեկատվություն։ Դա հնարավոր է մեծերին հարցնելու , դասագրքերում և գրքերում նյութը փնտրելու , համակարգչից օգտվելու , զանազան դիտարկումներ և փորձեր կատարելու միջոցով։

Հետազոտական աշխատանքը շատ երկարաժամկետ չպետք է լինի, քանի որն երեխեն շտապում է օր առաջ իր աշխատանքի արդյունքը։

Առաջին դասարանում նախնընտրելի է հանձնարարել հետևյալ բնույթի առաջադրանքներ.

Հորինիր կամ գտիր.

ա/ Ո՞ր կենդանիներն են ձմռանը քուն մտնում և ինչու՞

բ/ Ներկայացրու քո /մայրիկի, հայրիկի, եղբորդ / անվան պատմությունը

գ/ Քո բնակավայրի անվան պատմությունը

դ/Ինճու ՞են առավոտյան թռչունները դայլայլում։

ե/ Նկարիր քո սիրած ծաղիկը և զրուցիր նրա հետ

զ/ բացատրիր, թե ինչու է շնիկը շարժում պոչը։

է/ Ինչու է թռչունների մարմինը ծածկված փետուրներով։

Պատասխանները կարող են լինել բանավոր կամ նկարների , գծապատկերների , հենքայինբառերի տեսքով։

Երկրորդ դասարանում կարելի է ձևավորել պրոբլեմները տեսնելու , դրանք յուրովի լուծելու ունակություն. հարցեր առաջադրել տալ մեկնաբանություններ , կատարել փորձեր։Տվյալ երևույթի կամ պրոբլեմի լուծման վերաբերյալ կարծիք հայտնել կամ փոխել սեփական կարծիքը։Ուսումնասիրվող օբյեկտին նայել բազմակողմանի, աշխատել տեսնել այն , որը չես նկատել առաջին հայացքից կամ սովորաբար չի երևում։

Օրինակ՝

1. Ուշ աշուն էր։Երկինքը պատված էր սև ամպերով, տեղաց առաջին ձյունը։Ձյան խոշոր փաթիլները ընկնում էին տների, ծառերի մայթերի, ճանապարհի…։

Շարունակիր պատմությունը

2. Գրատախտակի մոտ գտնվող աշակերտն ստանում է հարցաթերթիկ։ Բարձրաձայն պատասխանում է հարցին՝ առանց հարցը բարձրաձայնելու։Մյուսներին անհրաժեշտ է գուշակել՝ ի՞նչ հարց է գրված հարցաթերթիկում։
    - Ինչու՞ են մարդիկ սենյակայի բույսեր աճեցնում։
    - Ո՞րն է քո ամենասիրելի կենդանին պատմիր նրա մասին՝ ինչ գիտես։
    - Ինչու են աշնանը թռչունները չվում տաք երկրներ։
    - Ինչպիսի գունավորում ունեն վագրերը։
    - Բուն ինչու՞ է գիշերը դուրս գալիս որսի։
    - Ինչո՞վ է տարբերվում աշունը տարվա մյուս եղանակներից։
    - Տարվա ո՞ր ամսին և եղանակին է սկսվում ուսումնական տարին։
    - Ինչպե՞ս կարող ես օգնել ձմեռող թռչուններին։
3. Վարկածների, առաջարկությունների և սադրիչ գաղափարների իրական և մտացածին հնարավորությունների ստեղծում։

    Գտնել հնարավոր պատճառները
    - Հողը ճաքճքել է, բույսերը չորացել, բնությունը անկենդան դարձել։
    - Այս դաշտում հաջորդ տարի ձնծաղիկ չի աճի։
    - Անահիտի պայուսակը դպրոց է բերում մայրիկը։
    - Մայր ճնճղուկը տագնապահար պտտվում էր բնի շուրջը։

Առաջին և երկրորդ դասարաններում սկսած աշխատանքը հարկավոր է շարունակել 3-րդ և 4-րդ դասարաններում, այսինքն՝ ձևավորել աշակերտների ուսումնահետազոտական գործունեությունն առավել կատարյալ ձևով։

Թեման երեխայի համար պետք է լինի հետաքրքիր, ինքնատիպ, տեղեկատվական։ Ուսումնահետազոտական աշխատանքը պետք է համապատասխանի երեխայի տարիքային առանձնահատկությանը։Նշենք, որ հետազոտական աշխատանքը լուրջ գործ է և չի սիրում շտապողականություն։ Երեխան պետք է ընկալի հիմնահարցը և ներթափանցի դրա մեջ։ Սովորողների հետազոտական գործունեության հաջողությունը հիմնականում պայմանավորված է ուսուցչի աշխատանքի իմաստալից պլանավորմամբ։ Ուսուցիչը պատրաստի գիտելիք

հաղորդողից վերածվում է հետազոտական աշխատանքի կազմակերպչի, օգնականի և ուղղորդողի։ նրապարտականությունն է՝ օգնել աշակերտներին հաղթահարելու տեխնիկական դժվարությունները,վերահսկել կատարվող աշխատանքների ուղղությունը, ապահովել աշխատանքային խմբերի կապը նաև արտաքին աշխարհի հետ՝ դպրոցի տնօրինության, ծնողների, , համայնք, հասարակական կազմակերպություններ և այլն։

Հետազոտական գործունեության ընթացքում սովորողները՝

- Կսովորեն ինքնուրույն հասնել արդյունքի,
- Կանխատեսել նպատակին հասնելու ճանապարհին առաջացած խնդիրները և դրանց լուծման ճանապարհները,
- Կկարողանան աշխատել տեղեկատվական աղբյուրներով,
- Կկարողանան գնահատել իրենց և ընկերների աշխատանքի արդյունքները։

  Աշխատանքի բոլոր փուլերում պետք է նկատի ունենալ, որ մեր ակնկալած արդյունքներից գլխավոր ստեղծագործական կարողությունների զարգացումն է, երեխայի կողմից նոր գիտելիքների,կարողութների և հմտությունների ձեռքբերումը։

Հետազոտական աշխատանքի օրինակ .

Թեման՝ Թռչուններ;

Նպատակը

- Ընտրված թեմայի ուղղությամբ հետազոտական կարողությունների զարգացում,
- Կրտսեր դպրոցականների ստեղծագործական-իմացական ներուժի խթանում,
- Հետազոտական և հաղորդակցման կարողությունների ու համագործակցային հմտությունների զարգացում,
- Տեղեկատվության վրա աշխատելու կարողությունների զարգացում
- Հիմնախնդիրը ձևակերպելու, համակարգելու և դրանց լուծման ուղիները գտնելու հմտությունների զարգացում,
- Սովորողների մեջ հոգատարության զգացում սերմանել թռչունների նկատմամբ։

Խնդիրները

- Ձևավորել տվյալներ հավաքելու, համակարգելու կարողություններ
- Զարգացնել տեղեկատվությունը համադրելու, ընդհանարացնելու և չանաչողական կարողությունները
- Տարբեր տեղեկատվական աղբյուրներից օգտվելու կարողությունները զարգացնելը
- Շրջապատի թռչունների ծանոթացում
- Երևույթի նկատմամբ գիտակցական վերաբերմունքի ձևավորում

1.Բնութագրել թռչուններին /ընդհանրապես/

2.փետուրների նշանակությունը թռչունների կյանքում:

3.Ինչով է պայմանավորվծ թռչունների չուն:

4. Խաղաղության խորրհրդանիշ թռչունը:

5. Թռչունները գեղարվեստական ստեղծագործություններում ..

6. Կարմիր գրքում հայտնված թռչունները…

.**Հետազզոտական աշխատանքի նմուշ օրինակ;**

Դասաան ՝ երկրորդ

Թեման <<Միջատներ>>

Նպատակը Ինքնուրույն դիտարկումներ կատարելու , եզրակացություն անելու կարողությունների ձևավորում;

.Կկարողանան համեմատություններ և համադրություններ կատարելու միջոցով բացահայտել կենդանի օրգանիզմների հատկությունները և հաստատել իրենց դիրքորոշումը:

Սովորողների առաջ խնդիր դնե <<Հնարավո՞ր է սարդին համարել միջատ, թե՞ ոչ>>;

Առաջադրել հետևյալ վարկածները.

.սարդը կարող է միջատ համարվել.

.սարդը չի կարող միջատ համարվել;շա

Սովորողները վերլուծում են բերված ապացույցները;,

1. Սարդը կարող է միջատ համարվել, որովհետև նման է մյուս շատ միջատների /բզեզ,մեղու, ճանճ/ կարող է սողալ ինչպես մրջյունը,, նրա մարմինը կազմված է մասերից ինչպես բոլոր միջատներինը;

2.Սարդը չի կարող միջատ համարվել, քանր որ նրա մարմինը կազմված է երկու մասից,,իսկ մյուս միջատներինը երեք, չունի թևիկներ և բեղիկներ , ուհի ոչ թե վեց, այլ ութ ոտք;:

Սովորողները Կարողացան հիմնավորել իրենց կարծիքը, պաշտպանել սեփական դիրքորոշումը պնդել այն.

Միայն ուսուցչի օգնությամբ, համացանցից օգտվելով իմացան, թե սարդըորոր դասին է պատկանում սարդը; [5]

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ



Եզրակացություն

Այսպիսով՝ հետազոտական գործունեությունը նպաստում է անձի ինքնաարտահայտմանը և ինքնազարգացմանը՝ ինքնուրույն աշխատելու փորձով օժտված, մտավոր գործունեության, հնարներին տիրապետող և համագործակցելու պատրաստ անհատականության ձևավորմանը։

Առարկայի ուսուցման հաջողությունը մեծապես կախված է սովորողների կողմից ցուցաբերված հետաքրքրությունների , ստեղծագործական ունակությունների , առարկայի նկատմամբ դրական վերաբերմունքի դրսևորումից և աշխատանքի համար անհրաժեշտ նյութեր ու պայմաններ ստեղծելուց։։

Ուսուցման արդյունավետության բարձրացման կարևոր գործոններից են ծ դասագրքերը, դասանյութի թեմաներին համապատասխան գ պաստառները, տեսաֆիլմերը, որոնք ավելի են մեծացնում սովորողների հետեքրքրությունը և տրամադրվածությունը դասի նկատմամբ։։

Հետազոտական աշխատանքում օգտագործվում են ուսուցման համար առանձնահատուկ ձևեր և մեթոդներ, դասի թեմայի մեջ այս կամ այն պրոբլեմի ներմուծումով, աշակերտի հետ հիմնական նպատակի ամրագրմամբ, աշխատանքի համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ;

Վերլուծություն. Աշակերտների կողմից հետազոտական, համագործակցային աշխատանք կատարելու դժվարությունները պայմանավորված են երեխաներիի տարիքային առանձնահատկություններով,, ինքնուրույն աշխատանք կատարելու նվազ կարողություններով; Տնային հանձնարարությունները կատարելիս մշտապես միջամտում են ծնողները, երբեմն էլ իրենք են կատարում առաջադրանքը ; Աշակերտների մոտ ինքնուրույն համագործակցային աշխատանք կատարելու հմտությունների անբավարար լինելը պայմանավորված է նաև տեսական անբավարար գիտելիքներ ունենալով; Ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու գործում կարևոր նշանակություն ունի այն միջավայրը /քաղաք, գյուղ/ որում ապրում է երեխան: Հետևաբար դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է կարողանա հետազոտվող թեմայի ճիշտ ընտրություն Կատարել; Սովորողները Կարողացան հիմնավորել իրենց կարծիքը, պաշտպանել սեփական դիրքորոշումը և պնդել այն;

Օգտագործված գրականության ցանկ

1..Բարսեղյան Ա. և ուրիշներ «Ֆինանսական կրթության դասավանդման մեթոդիկա «Ես և շրջակա աշխարհ» առարկան դասավանդող ուսուցիչների համար»

Հրատարակված է ներքին օգտագործման համար 2018թ.էջ 99, 219 էջ

2..Գյուլբուդաղյան Ա. և ուրիշներ «Տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհ» առարկայի չափորոշիչներ և ծրագիր»

Երևան 2008թ. Տիգրան Մեծ հրատարակչություն էջ 5, 29 էջ

3.Թորոսյան Կ. «Նախաշավիղ գիտամեթոդական հանդես» 2015.5 էջ 4,7

4..Մանուկյան Մ. «Նախաշավիղ գիտամեթոդական հանդես» 2016.6 էջ 18,22

5. Մուսայելյան Ա. «Նախաշավիղ գիտամեթոդական հանդես» 2013.7 էջ 15,18

6. Տողանյան Ն. «Ես և շրջակա աշխարհ» ձեռնարկ